ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ստեփանակերտի Թամարա Քամալյանի անվան բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի խորհուրդը հայտարարում է մրցույթ «Ստեփանակերտի Թամարա Քամալյանի անվան բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար:

Մրցույթին կարող են մասնակցել ԱՀ քաղաքացի հանդիսացող, բարձրագույն կրթությամբ, տասը տարվա մանկավարժական ստաժ կամ վերջին տասը տարվա ընթացքում կրթության կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ ունեցող քաղաքացիները:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1) դիմում,
2) անձնագիրը և պատճենը,
3) հանրային ծառայությունների համարանիշը կամ սոցիալական քարտը,
4) դիպլոմը և պատճենը,
5) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացվում է մրցույթի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ),
6) հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթը (դրանց առկայության դեպքում),
7) աշխատանքային գրքույկը և պատճենը:

Մրցույթը տեղի կունենա Ստեփանակերտ քաղաքի Ա. Մկրտչյան 4 հասցեում («Ստեփանակերտի Թամարա Քամալյանի անվան բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքում) 2023 թվականի փետրվարի 20-ին՝ ժամը 11:00-ին:

Փաստաթղթերն ընդունվում են ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչության մասնագիտական կրթության և գիտության բաժնում 2023 թվականի հունվարի 13-ից մինչև փետրվարի 13-ը:

Հասցե՝ ք. Ստեփանակերտ, Թումանյան 48 (հեռ.՝ (047)94-11-39):